ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 3. Պրոբացիայի ծառայության համակարգը

1. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական մարմնից և տարածքային մարմիններից: Կենտրոնական մարմինը բաղկացած է հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից: Տարածքային մարմինները գործում են բաժնի կարգավիճակով:
2. Պրոբացիան~~յի ծառայությունն~~ իրականացվում է կենտրոնական մարմնի հիմնական մասնագիտական, այդ թվում՝ վերասոցիալականացման և վերականգնողական ստորաբաժանումների և տարածքային մարմինների կողմից:
3. Պրոբացիայի ծառայության կանոնադրությունը, հաստիքացուցակը հաստատում է (օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն) համապատասխան մարմնի ղեկավարը (այսուհետ՝ Նախարար):
4. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և կարող են ունենալ անհատականացման այլ միջոցներ:
5. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից օգտագործվող կնիքի, միասնական նմուշի ձևաթղթերի, խորհրդանիշի, անհատականացման այլ միջոցների նկարագիրը հաստատում է Նախարարը:

Հոդված 4. ~~Գլխավոր քարտուղարը և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները~~ Քաղաքացիական ծառայողները

1. Պրոբացիայի ծառայությունն ունի գլխավոր քարտուղար: Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքով:
2. Պրոբացիայի ծառայության գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:
3. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայությունն ընդգրկում է ~~-~~ծառայությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք անմիջական հաշվետու են գլխավոր քարտուղարին, ինչպես նաև Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացման և վերականգնողական ստորաբաժանումը, որն անմիջական հաշվետու է Պրոբացիայի ծառայության պետին:
4. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով: